ԽԱՂԱՂ, ԲԱՐԻ ԱՆՁՐԵՎ

Ինքը կդներ այս էպիտետներից միայն մեկը - կամ խաղաղ, կամ բարի: Ինքը չէր գրի «կամ-կամ»: Չէր գրի «միայն մեկը», կգրեր «մեկը»: Զարմանալի պինդ նրա արձակը չի դյութում շեշտի օրորուն խաբկանքով: Նրա «խնձոր» բառը խնձոր-միրգ է, «փշատենու բուրմունքը» փշատի ծառը պարուրում է ճիշտ բուրմունքի պես, այնինչ բանաստեղծության եղած-չեղած թուր-կեծակին դահլիճներ է զատում քեզանից, սոսկ «հայրենիք» հնչումը ընթերցող է կողոպտում քեզանից, վայելքի գովքն ընթերցող է հեռացնում քեզանից, այնինչ գրում է, առանց չափազանցության, ամբողջ աշխարհը և ամբողջ աշխարհն է լավ գրում, և որպեսզի «համերգի մեջ այս աշխարհի չհամրանաս, չհամրանաս»՝ ուզում ես պայթեցնել բառը, զգացումը, զգացմունքը, էպիտետի փոխարեն ուզում ես ռումբ դնել, ուզում ես ասել տիեզերք, միջմոլորակային... իսկ Զորյանի մարմանդ արձակում կացնահարվում է ընդամենը խնձորի այգի, հանդերում սատկելու է գնացել ընդամենը շուն, աղբյուր է քանդվել, ընդամենը ձյուն է գալիս, որդու բացակայությամբ՝ կռների ուժը կորցրել է ընդամենը մի մաճկալ. նրա «առավոտն» առավոտ է, «գինի»-ն՝ գինի, «հեծելազորը»՝ հեծելազոր: Նրա մոտ չկան «սիրում եմ», «փիլիսոփայություն», «հայրենիք», «ատում եմ», «գեղեցիկ» բառերը, բայց նա սեր, փիլիսոփայություն, հայրենասիրություն, ատելություն ու գեղեցկություն է ամբողջությամբ: «Երբ քաշում է դակտիլը - սանձի՛ր» խորհրդի միակ իրավասուն նա պիտի լիներ, որովհետև նրա բազմահատոր աշխատանքը, և երկար կյանքը նույնպես, «դակտիլը սանձիր» է:

Իսկ ինչքան գեղեցիկ է մարմրում կոճղը. նա ամիսներով իր մեջ կրակ է պահում: Բոցի հրապուրանքից հմայիչը տաք մոխիրն է. անծուխ-անբոց նրա արձակը չի թողնում իրենից հեռանալ տաք մոխրի ջերմությամբ: Իսկ ո՞րն է արտերի ուզած անձրևը: Երբ կայծակները շատ են ճայթում՝ գյուղացի մարդիկ հաճախ ասում են. «գոռում է, գուցե անձրև չգա». հաճախ էլ տարբերում են քշող-տանող տեղատարափի կայծակները. և ժպտում են՝ երբ ամպը անձայն ամպին է գալիս, ամպերը ծանրանում են, իջնում, և փափուկ խշշոցով մաղում է արտերի ուզած անձրևը, հեռվի սարերից դենը երբեմն սուսուփուս հանգչում է փայլակը, որին լոռեցիները ծովիան են ասում, ապա փայլակը մի անգամ էլ է մարմրում, անձրևը դանդաղ քաշվում է վեր, դեպի ամպերը, և բացվում է մի կանաչ, լվացված, մաքուր արև-աշխարհ. դա խաղաղ, բարի, տենչված անձրև է: Դա Զորյանն է: Վերջին համագումարի ամբիոնից շարադրող-գրողների փոխարեն արվեստա-

գետ-գրողներ ունենալու նրա իրապես մեծ պահանջը դարձյալ անաղմուկ հնչեց հավուր պատշաճի ասված խոսքերի արանքում և նրա վերջինը՝ «Վարազդատը», դարձյալ անաղմուկ մտավ մեր գրականություն, որի հերկվորը, սերմնացանը, ջրվորն ու հանդապահն էր ինքը:

Մենք կորցրել ենք քառասնամյա Չարենցին, երեսունութ տարեկան Բակունցին, հիսունչորս տարեկան Թումանյանին. Զորյանը բոլորում էր ութսուն տարին... Չէ, լավերը զուր են մեռնում: